

Հայտարարություն ԱԺ պատգամավոր Ռուբիկ Հակոբյանի՝ «Հրապարակ» օրաթերթի թղթակից Վահե Մակարյանի նկատմամբ կիրառած բռնության վերաբերյալ

Դեկտեմբերի 8, 2016

Երեկ՝ 2016թ. դեկտեմբերի 7-ին, Ազգային ժողովի պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը բռնություն է կիրառել «Հրապարակ» օրաթերթի թղթակից Վահե Մակարյանի նկատմամբ: Լրագրողը խորհրդարանում հավատարմագրված գործընկերների հետ հարցեր է ուղղել պատգամավորին նրա՝ ՀՅԴ-ին անցյալում անդամակցելու և կուսակցության հետ այժմյան հարաբերությունների վերաբերյալ, սակայն «արժանացել է» կոպիտ վերաբերմունքի: Վահե Մակարյանի՝ պատգամավորին ավելի ուշ հարց ուղղելու փորձը կրկին ձախողվել է և վերածվել վիճաբանության, որի ընթացքում Ռուբիկ Հակոբյանն ասել է, թե «կուլտուրա» կտվորեցնի լրագրողին, իսկ լրագրողն էլ հակադարձել է, թե ինքը կարող է սովորեցնել:

Այս գրույցը շարունակելու համար պատգամավորը լրագրողին առաջարկել է առանձնանալ և, ըստ Վահե Մակարյանի՝ վեճի ընթացքում բռնուցքով հարվածել է իրեն ու սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել: Հարվածի հետքն ակնհայտորեն երևում է լրատվամիջոցներում հրապարակված [տեսանյութում](#), որտեղ լրագրողը մանրամասներ է ներկայացնում միջադեպի վերաբերյալ:

Մեզ հետ հեռախոսազրույցում պատգամավորն իր պահվածքը հիմնավորեց Վահե Մակարյանի հանդուգն վարքով:

Սա առաջին դեպքը չէ, երբ քաղաքական գործիչները, բարձրաստիճան պաշտոնյաներն ու հայտնի այլ անձինք կորցնում են ինքնատիրապետումն անհաճո հարցեր լսելիս և թույլ են տալիս իրենց զբաղեցրած դիրքին ոչ հարիր արարքներ:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, պահանջում ենք.

– պատգամավոր Ռուբիկ Հակոբյանից՝ անհապաղ ներողություն խնդրել լրագրող Վահե Մակարյանից և ապագայում բացառել լրագրողների նկատմամբ բռնություն կիրառելն ու անվայել պահվածք դրսևորելը,

– ԱԺ Էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովից՝ քննարկել այս միջադեպում պատգամավորի դրսևորած վարքագիծը և հրապարակել իր եզրակացությունը:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ
ԳՈՐԻՍԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ